

ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՄԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածը ստացվել է՝ 24.02.25, ուղարկվել է գրախոսման՝ 26.03.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ

Ներածություն: Տնտեսական ներուժը ընդգրկումն հասկացություն է, որն բնութագրում է երկրի տնտեսության հզորությունը՝ առանձին ճյուղերի, տնտեսական գործունեություն իրականացնելու, ապրանքներ և ծառայություններ արտադրելու, հասարակության պահանջմունքները բավարարելու կարողությունները: Տնտեսական ներուժն է կանխորոշում ցանկացած ազգային տնտեսության անկախության աստիճանը, նրա տեղը և դերը համաշխարհային տնտեսական համակարգում, բնակչության կյանքի որակը: Հետաքրքիր է տնտեսական աճի և տնտեսական ներուժի փոխկապվածության դիտարկումը. տնտեսական կայուն և բարձր աճը տնտեսական ներուժի իրացման հետևանք է, բայց նաև նպաստում է տնտեսական ներուժի հզորացմանը: Նույն տրամաբանությամբ սերտ փոխկապված են տնտեսական աճ և բյուջեի ծախսեր կատեգորիաները. բյուջեի ծախսերի աճը նպաստում է ՀՆԱ-ի աճին, իր հերթին տնտեսական աճը ռեալ հիմքեր է ստեղծում մեծացնելու բյուջեի ծախսերը: Պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության նվազումը կառավարության ծախսերի կրճատման և որպես հետևանք մասնավոր սեկտորի զարգացման համար նախադրյալների ստեղծման մասին է վկայում: Ուստի, շարունակում է արդիական մնալ մշակվող և իրականացվող բյուջետային քաղաքականությունը, որից մեծապես կախված է երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը, հասարակության բարեկեցությունը:

Սույն հետազոտության **նպատակն է** բյուջետային ծախսերի կառուցվածքային փոփոխությունների բազմակողմանի վերլուծությամբ առաջարկել ՀՀ տնտեսության ներուժի զարգացման ուղիներ: Այդ նպատակով **խնդրադրել ենք** իրականացնել ՀՀ տնտեսական աճի, դրա վրա տնտեսության ճյուղերի ազդեցության դինամիկայի վերլուծություն, բացահայտել բյուջետային ծախսերի կառուցվածքային տեղաշարժերը վերջին տարիներին և հիմնավորել տնտեսական ներուժի զարգացման վրա դրանց հավանական ազդեցությունները:

Գրականության վերլուծություն: Տնտեսական ներուժի զարգացումն ու իրացումը, այս համատեքստում բյուջետային ծախսերի կառուցվածքի ու փոփոխության միտումների շուրջ դիսկուրսը տնտեսագիտական գրականության մեջ շարունակում է մնալ արդիական կապված արագ զարգացումներից բխող փոփոխություններով: Չ. Կունսաթ գտնում է, որ «Ֆինանսական ծրագրավորման շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում ապահովել համապատասխանու-

թյուն պետության եկամուտների ու ծախսերի և տնտեսության զարգացման ներուժի միջև»¹:

Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը առանձին տնտեսագետներ կապում են բյուջետային ծախսերի արդյունքների հետ՝ այն բնութագրելով որպես պլանային ցուցանիշների ձեռքբերման որոշակի աստիճան²:

Պետական ներդրումների վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պետական կապիտալի թողարկման էլաստիկությունը միջին հաշվով 0.106 է³: Ըստ որում՝ պետական ավելի բարձր ներդրումները կարող են մասնավոր ներդրումների արդյունավետությունը բարձրացնել և համալրել դրանք. այս նոր փաստերը բացատրում են զարգացող երկրներում պետական ներդրումների ունեցած համալրող ազդեցությունը⁴: Վ. Ժուկովն ու Ս. Օպենիշը, անդրադառնալով պետական ֆինասական վերահսկողության առարկայի լուսաբանմանը՝ լայն իմաստով այն դիտարկել են վերարտադրության բոլոր փուլերով և կառավարման մակարդակներով, իսկ նեղ իմաստով՝ պետական բյուջեի մակարդակով⁵:

Ռ.Կոնստանցի հոդվածում ՀՆԱ-ի օգտագործումը, որպես տնտեսական բարեկեցության գնահատման միջոց համեմատվում է տան բնակիչների կողմից օգտագործվող էլեկտրաէներգիայի՝ որպես նրանց կյանքի որակի գնահատման ցուցանիշ ընդունելու հանգամանքի հետ⁶:

Մեթոդաբանություն: Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների գնահատման համար օգտագործվել է Համաշխարհային բանկի կողմից մշակված գործիքը՝ «Job Generation and Growth Decomposition tool»⁷ անվանմամբ: Սույն մեթոդաբանությունը հիմնվում է մեկ շնչի հաշվով օգտակար գործողության արդյունքի տարրալուծման վրա(Շափլի/Shapley), ցուցանիշ, որը բնութագրում է տնտեսական աճի դինամիկան ՀՆԱ-ի հետ մեկտեղ: Այս ցուցանիշի աճի

¹ Кунас З.. 1994г. Среднесрочное финансовое планирование в Германии. Финансы. N 10.стр. 47

² Бокарева Л., 2008, Аудит эффективности: вопросы методологии и методики // Учет и контроль, М., № 2; Осипов А., Аникин В., Котлячков О. и др., Методика оценки эффективности использования государственных средств: монография, Ижевск: Изд-во ИжГТУ, 2006.

³ Bom, Pedro R.D., & Jenny E. Ligthart. 2014. “What Have We Learned From Three Decades Of Research On the Productivity of Public Capital?” Journal of Economic Surveys ,Wiley Blackwell, vol. 28(5): 889–916 (December).

⁴ Eden, Maya, & Aart Kraay. 2014. “‘Crowding in’ and the returns to government investment in low-income countries,” Policy Research Working Paper Series 6781, The World Bank, Washington, DC.

⁵ Жуков В., Опенышев С. 2000г. Предмет, метод, виды и принципы государственного финансового контроля. Бюллетень Счетной палаты РФ. N 4.

⁶Portland State University, Beyond GDP: The Need for New Measures of Progress, https://pdxscholar.library.pdx.edu/cgi/viewcontent.cgi?article=1010&context=iss_pub, վերջին մուտք 24.03.2025

⁷ Shu World Bank Group, <http://go.worldbank.org/E5PB0575Z0>, վերջին մուտք 23.09.2024

հիմնական աղբյուրը աշխատանքի արտադրողականությունն (1 աշխատողի հաշվով թողարկված արտադրանքը) է, նոր աշխատատեղերի ստեղծումը (գրադվածության մակարդակը) և ժողովրդագրական գործոնը (գրադվածների մասնաբաժինը բնակչության թվում): Հավաքագրվել է վիճակագրություն ըստ մոդելի հետևյալ էկզոգեն տվյալների՝ ՀՆԱ-ն և գրադված բնակչության թիվը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, մշտական բնակչության միջին տարեկան թիվը, տնտեսապես ակտիվ բնակչության թիվը:

Վերլուծություն ՀՀ-ում 2000-2008թթ արձանագրված տնտեսական աճի բարձր տեմպերը ոչ արտահանելի հատվածի և, մասնավորապես՝ շինարարության ճյուղի աննախադեպ աճի արդյունք էին, ինչը ՀՀ ներհոսող կապիտալի՝ շինարարության ոլորտում կենտրոնացման հետևանք էր: 2003-2008թթ. ՀՀ-ում արձանագրվել է միջինում տարեկան 12% տնտեսական աճ, որտեղ ընդգծված մեծ էր շինարարության և ծառայությունների մասնաբաժինը՝ միջինում 8.3%: Որպես հետևանք 2003-2008թթ. ՀՆԱ-ի կառուցվածքում զգալիորեն մեծացել է տնտեսության ոչ արտահանելի հատվածի կշիռը՝ շուրջ 47%-ից դառնալով 59%, այդ թվում շինարարության ճյուղի կշիռը 2008թ. կազմել է 25.3%՝ նաև արձանագրելով ՀՆԱ-ի աճի տեմպի նկատմամբ առաջանցիկ աճ(2003-2008թթ.՝ միջինում 26%-ով)⁸: Նույն տրամաբանությամբ, դրամական փոխանցումների էական կրճատման հետևանքով շինարարության ճյուղում 2009թ 41.6%-ով անկում արձանագրվեց, որպես հետևանք տարվա 14.1% տնտեսական անկման 10.5 տոկոսային կետը բաժին ընկավ հենց շինարարությանը⁹: Տնտեսության «ոչ արտահանելի» ճյուղերը փաստորեն ներուժի աճի վրա շոշափելի ազդեցություն չեն ունեցել, իսկ գործույնային փոփոխության դեպքում՝ աճը կտրուկ դադարել է՝ հանգեցնելով այդ և հարակից ոլորտների անկմանը:

2008թ. ծառայությունները ՀՆԱ-ում ունեցել են 33.7 տոկոս կշիռ, ինչը հիմնավորվում է նախորդ տարիներին ծառայությունների նկատմամբ բարձր պահանջարկով: 2003-2008թթ. ծառայությունների ոլորտի միջին տարեկան աճի տեմպը կազմել է 12.2%՝ պայմանավորված ոչ արտահանելի ենթաճյուղերի՝ տրանսպորտի և կապի, ինչպես նաև ֆինանսական միջնորդության զարգացմամբ: 2009թ ծառայությունների անկումը համեմատաբար համեստ էր՝ 3.3%, որը գլխավորապես հետևանք էր տրանսպորտի և կապի ենթաճյուղերի ազդեցության: Արդյունաբերության ճյուղը 2008թ. ՀՆԱ կառուցվածքում շատ փոքր մասնաբաժնով էր առանձնանում՝ 2003-2008թթ ապահովելով միջինում 3.8% աճ: Ճգնաժամի ընթացքում արդյունաբերության ճյուղը համաշխարհային և ներքին պահանջարկի նվազման արդյունքում սննդամթերքի և շինանյութերի

⁸ՀՀ ՎԿ պաշտոնական կայք,

<https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, վերջին մուտք 24.03.2025

⁹ՀՀ ՎԿ պաշտոնական կայք,

<https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, վերջին մուտք 24.03.2025

արդյունաբերության կրճատմամբ պայմանավորված 6.9%-անկում ապրեց: 2008թ զյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում գերազանցում էր միայն արդյունաբերության ցուցանիշը՝ 2003-2008թթ. ունենալով 7.4%-միջին աճ: Հետաքրքիր է, որ ճգնաժամի ընթացքում աճ(6%) արձանագրած միակ ճյուղը զյուղատնտեսությունն էր¹⁰:

Այդուհանդերձ, չնայած 2009թ արձանագրված տնտեսական անկման երկնիշ ցուցանիշին, շնորհիվ կոորդինացված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների, հնարավոր եղավ խուսափել մակրոտնտեսական վիճակի ապակայունացումից և որպես հետևանք՝ 2010-2013թթ տնտեսությունում արձանագրվեցին տնտեսական աճի միտումներ: Հարկ է նկատի ունենալ, որ ճգնաժամից և տնտեսական աճի բարձր մակարդակներից հետո Հայաստանի տնտեսությունը բնականորեն տեղափոխվել է ավելի ցածր տնտեսական աճի դաշտ, սակայն համեմատաբար որակյալ և կայուն ցնցումների նկատմամբ: 2010-2013թթ. ծառայությունները աճել են միջինում 5.1%-ով՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին¹¹: 2013թ. արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում դարձավ 17.4%: Բնակլիմայական գործոններից մեծ կախվածության պատճառով զյուղատնտեսությունում տատանումներն ավելի մեծ են, մասնավորապես 2010թ. բուսաբուծության ենթաճյուղի պատճառով ճյուղում 16% անկում արձանագրվեց: 2011-2013թթ ճյուղում աճ գրանցվեց՝ միջինում 10.2%¹²:

Հետճգնաժամային ժամանակաշրջանում շինարարության ճյուղը երկրի ՀՆԱ-ի կառուցվածքում չվերականգնեց իր երբեմնի բարձր մակարդակը: Ճյուղի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2013-2023թթ միջինում կազմել է 7.6%, իսկ զարգացումը ընթացել է վայրիվերումներով, մասնավորապես նշված ժամանակաշրջանի 4տարիներին անկում է գրանցվել, այդ թվում 2016թ՝ 12.5 տոկոսով: Արդյունքում վերջին 11 տարվա կտրվածքով ճյուղում աճը միջին հաշվով կազմել է 1.5 տոկոս¹³:

Որոշակիորեն այլ է պատկերը արդյունաբերությունում. 2013-2023թթ ճյուղի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ կազմել է միջինում 18.0 տոկոս, ի տարբերություն շինարարության ճյուղի տարեցտարի աճել է, բնականաբար, մեծ էր նաև միջին տարեկան աճի տեմպը՝ 5.4 տոկոս. այս ցուցանիշով առաջ է տնտեսական աճի

¹⁰ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք,

<https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, վերջին մուտք 24.03.2025

¹¹ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք,


<https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, վերջին մուտք 24.03.2025

¹² ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/file/doc/99489173.pdf>, էջ 18, վերջին մուտք 24.03.2025

¹³ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/file/doc/99541093.pdf>, <https://armstat.am/file/doc/99504388.pdf>, վերջին մուտք 24.03.2025

միջին տարեկան տեմպից/4.5 տոկոս/: Ընդ որում՝ դիտարկվող ժամանակաշրջանում ճյուղում փոքր անկում գրանցվել է միայն 2020թ՝ 0.9 տոկոս¹⁴:


Ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսությունը 2013-2023թթ ամենափոքր աճի ցուցանիշն ուներ՝ միջին տարեկան 0.6 տոկոս, ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տարեցտարի նվազել է՝ միջինում կազմելով 13.9 տոկոս¹⁵:



Գծապատկեր 1 Տնտեսական աճի, որոշ ճյուղերի աճի ցուցանիշներն 2013-2023թթ¹⁶

Հետաքրքիր է, որ դիտարկված ժամանակաշրջանում տնտեսական աճի տեմպը հիմնականում գերազանցել է շինարարությունում արձանագրված աճի տեմպին, ինչը ենթադրում է, որ ճյուղի ազդեցությունը տնտեսական աճին աննշան է, առանձին տարիներին անգամ բացասական:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ում բերված տվյալներից ՀՀ-ում տնտեսական աճը 2018-2022թթ գերազանցել է ԵԱՏՄ անդամ պետություններում արձանագրված տնտեսական աճի ցուցանիշը: ՀՀ տնտեսական աճի և անկման ցուցանիշների՝ համաշխարհային կամ միջին եկամուտներով երկրների տնտեսության ցուցանիշների համեմատ կտրուկ տատանումները գլխավորապես տնտեսության փոքրությամբ է պայմանավորված:




Գծապատկեր 2 Տնտեսական աճի ցուցանիշները աշխարհում և ՀՀ-ում 2018-2022թթ

¹⁴ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/file/doc/99510948.pdf>, վերջին մուտք 21.04.2025 <https://armstat.am/file/doc/99541093.pdf>, վերջին մուտք 21.04.2025

¹⁵ Նույն տեղում

¹⁶ Նույն տեղում

Մեր կողմից հետազոտվել է պետական ծախսերի և տնտեսական աճի տեմպերի միջև առկա կապը: Դիտարկված ժամանակահատվածում պետական ծախսերի աճի տեմպը մեծ էր ՀՆԱ աճի տեմպից, ընդ որում ըստ տարիների այն անհամաչափ է եղել. աճը ընդգծված էր 2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին, 2020թ 7.2 տոկոս տնտեսական անկման շրջանում պետական ծախսերի աճը ամենաբարձրն էր՝ 16.3 տոկոս¹⁷: Փաստորեն ինչպես երևում է նաև գծապատկեր 3-ից 2013-2023թթ պետական ծախսերի միջին տարեկան աճը երկու անգամ գերազանցել է տնտեսական աճի տեմպին: Պետական ծախսերի ցուցանիշը 2023թ. գերազանցել է 2003թ. մակարդակը շուրջ 8.1 անգամ, 2013թ մակարդակը՝ 2.2 անգամ: Ընդ որում՝ նույն ժամանակաշրջանում ՀՆԱ-ի աճը/անվանական/ կազմել է համապատասխանաբար 5.8 անգամ և 2,1 անգամ:



Գծապատկեր 3 Պետական բյուջեի ծախսերի և տնտեսության աճի տեմպերը 2013-2023թթ¹⁸ %-ով նախորդ տարվա նկատմամբ

Պետությունները, ձգտելով ՀՆԱ-ի մեջ մեծացնել պետական ծախսերի մասնաբաժինը, նպաստում են տնտեսության մեջ «պետության սահմանների» ընդլայնմանը: Մեր օրերում պետությունները շուկայում հանդես են գալիս որպես խոշոր գնորդ՝ ազդելով տնտեսության վրա: Կարևոր է, որ պետական ծախսերի զգալի մասն իրականացվում են ոչ թե տարեկան, այլ երկարաժամկետ կտրվածքով՝ պահանջելով շարունակականություն, այլապես նախկինում կատարված ծախսերը փոշիանում են: Հետսոցիալիստական մի շարք երկրներում՝ Ռուսաստանում, Ղազախստանում, Բելառուսում այս երևույթը որոշ տնտեսագետներ կոչել են «պետական օլիգարխիկ կապիտալիզմ»¹⁹: ՀՀ-ում իրավիճակն այլ էր. նախ ՀՆԱ-ի նկատմամբ պետական ծախսերի մասնաբաժինը մեծ չէ՝ 2022թ տվյալներով 26.4 տոկոս, և ապա, պետական սեփականությունը, պետական ձեռնարկությունների կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակեր-


¹⁷ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/am/?nid=12&id=17005>, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submi>, վերջին մուտք 24.03.2025

¹⁸ՀՀ ՎԿ պաշտոնական կայք <https://armstat.am/am/?nid=12&id=17005>, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submi>, վերջին մուտք 24.03.2025

¹⁹А. Радыгин, Р. Энгов, В поисках институциональных характеристик экономического роста (новые подходы на рубеже XX-XI вв). // Вопросы экономики, 2008, № 8.

պությունների թիվն է տնտեսության մեջ փոքր, ուստի փոքր է նաև այդ կազմակերպություններից բյուջե փոխանցվող շահաբաժինները²⁰:

Դիտարկվող ժամանակահատվածում ծախսերի տեսքով պետության «մասնակցությունը» տնտեսությանը մեր կարծիքով մեծացել է գրեթե այնքան, որքան «թույլ է տվել» տնտեսական աճը՝ հավաքագրվող հարկային եկամուտների միջոցով: Շատ կարևոր է պարզել, թե որքան են պետական ծախսերն իրենց հերթին նպաստում տնտեսական աճին: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 4-ում բերված տվյալներից՝ տնտեսական աճին նպաստելու չափը ոչ միայն մեծ չէ, այլև ընդգծված տատանողական բնույթ է կրել: Ոչ պետական ծախսերի մեծությունը, ոչ տնտեսական աճի տեմպերը, ոչ պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը վճռորոշ ազդեցություն չեն ունեցել տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու ցուցանիշի դինամիկայի վրա: Անգամ երկնիշ աճի ժամանակահատվածում՝ 2002-2007թթ., առանձին տարիների տնտեսական աճին պետական ծախսերի նպաստման չափը տատանվել է 0.2-1.9% միջակայքում: Իսկ 2009թ 14.1% տնտեսական անկման և 14.6% պետական ծախսերի աճի պայմաններում պետական ծախսերի ազդեցությունը անկման 0.1%-ն է կազմել: Հատկանշական է, որ 2020թ տնտեսական անկման տարում, չնայած պետական ծախսերն աճել էին 16.3%-ով, այդուհանդերձ, այն տնտեսական անկմանն է իր նպաստը բերել: Պետական ծախսերի հավելաճի տեմպի և տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափը նկարագրող ցուցանիշների միջև ևս օրինաչափությունը չի պահպանվել:



Գծապատկեր 4 Տնտեսական աճին պետական ծախսերի նպաստումը, %²¹

²⁰ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, https://armstat.am/file/article/finansner_2023_1.pdf, վերջին մուտք 24.03.2025

²¹ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/am/?nid=12&id=17005>, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submi>, վերջին մուտք 24.03.2025, իսկ տնտեսական աճին պետական ծախսերի նպաստման չափը հաշվարկվել է հեղինակի կողմից

Բերված տվյալների վերլուծությունն վկայությունն է այն բանի, որ ՀՀ-ում պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է, բավական հեռու է համաշխարհային միջինից: Ուստի պետական ծախսեր/ՀՆԱ փոքր ցուցանիշը նվազ չափով է նպաստում տնտեսական աճին, իսկ ճգնաժամային 2008թ.-2009թ., պատերազմական և քովիդյան ժամանակաշրջանում, երբ տնտեսությունն անկում էր ապրում, պետական ծախսերի համապատասխանաբար 27.7%, 14.6% և 16.3% աճերը ոչ միայն ի գործու չէին կասեցնելու անկումը, այլև նպաստել են անկմանը համապատասխանաբար՝ -0.2%-ով, 0.1%-ով և -0.1%-ով: Կարելի է նաև այլ հետևության հանգել՝ պետական ծախսերի կառուցվածքը և ուղղությունները եղել են անարդյունավետ:

Ինչպես երևում է աղյուսակից դիտարկված ժամանակաշրջանում պետական բյուջեի ծախսերն ու եկամուտներն աճել են: Սակայն հարկեր/ՀՆԱ, ինչպես և ծախսեր /ՀՆԱ ցուցանիշները դեռևս փոքր են, դրանց ամենաբարձր մակարդակը արձանագրվել են 2020թ՝ համապատասխանաբար 25.2 տոկոս և 30.6 տոկոս:

Աղյուսակ 1

Պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի դինամիկան 2018-2023թթ²²

	Պետական եկամուտներ մլն դր	Պետական ծախսեր մլն դր	Պետ.եկամուտ. ՀՆԱ-ի նկատ.%,	Պետ.ծախսերը ՀՆԱ-ի նկատ.%,
2018	1341.7	1447.1	22.3	24.1
2019	1565.5	1629.4	23.9	24.9
2020	1560.7	1894.6	25.2	30.6
2021	1683.8	2004.3	24.1	28.7
2022	2063.1	2242.6	24.3	26.4
2023	2358.8	2547.6	24.9	26.9


Այժմ անդրադառնանք նկարագրված տնտեսական միջավայրի փոփոխությունների՝ ժողովրդագրական իրավիճակի վրա ազդեցությանը. 2017թ համեմատ 2023թ Հայաստանի բնակչությունը աճել է 0.6%-ով, իսկ աշխատանքային ռեսուրսները՝ 10.0%-ով: Աշխատուժի աճի համեմատաբար բարձր տեմպերի հետևանքով 10.8%-ային կետով աճել է բնակչության կազմում աշխատուժի մասնաբաժինը, իսկ ոչ ֆորմալ զբաղվածությունը ընդհանուր զբաղվածության մեջ 2018թ սկսած նվազել, 2022-2023-ին՝ աճել է²³:

Օգտագործելով աշխատուժի հետազոտության գեկույցներում առկա պաշտոնական վիճակագրական տվյալները՝ հաշվարկել ենք ոչ ֆորմալ զբաղվածության համամասնությունը ընդհանուր զբաղվածության մեջ վերջին մի

²² ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/file/doc/99541128.pdf>, 24.03.2025

²³ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/file/doc/99511628.pdf>, <https://armstat.am/file/doc/99552283.pdf>, <https://armstat.am/file/doc/99552423.pdf>, վերջին մուտք 21.04.2025

քանի տարիներին, ըստ որի ցուցանիշն ՀՀ-ում տատանվել է 14-22 տոկոսի սանդղակում:



Գծապատկեր 5 Ոչ ֆորմալ զբաղվածության համամասնությունը ընդհանուր զբաղվածության մեջ, %²⁴

Աղյուսակ 2

Թափուր, նոր ստեղծված, կրճատված աշխատատեղերը, ըստ հիմնական տնտեսական գործունեության տեսակների, հազար²⁵


	Թափուր աշխատատեղեր				Նոր ստեղծված աշխատատեղեր				Կրճատված աշխատատեղեր			
	2019	2020	2021	2022	2019	2020	2021	2022	2019	2020	2021	2022
Ընդամենը	9.3	9.1	10.5	8.9	44.6	38.6	52.5	68.9	40.8	39.4	49.7	56.4
Գյուղատնտեսություն, անտառ.տնտեսություն	0.1	0.1	0.1	0.1	1.3	1.1	0.8	1.1	1.3	0.7	0.8	1.3
Արդյունաբերություն	1.1	0.9	1.4	1.5	9	6.6	8	10.5	9	6.8	8	9.1
Շինարարություն	0.1	0.1	0.1	0.1	3	3.5	4.7	6.2	3	3.8	5.2	4.3
Մեծածախ և մանրածախ առևտուր	0.2	0.1	0.4	0.1	9.5	8.5	12.4	14.9	8	8.1	11.8	12.3
Ֆինանսներ, ապահովագրական գործունեություն	1.1	0.9	1.2	1.2	1.5	0.9	1	1.8	0.7	0.9	1	1.3
Պետական կառավարում և պաշտպանություն, սոց.	3.8	4.4	3.8	2.6	2.2	1.3	0.9	7.6	3.2	1.2	1.4	5.2
Այլ	2.9	2.6	3.6	3.3	18.1	16.7	24.7	26.8	15.6	17.9	21.5	22.9

²⁴ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, <https://armstat.am/am/?nid=81&id=2625>, <https://armstat.am/am/?nid=81&id=2447>, <https://armstat.am/am/?nid=81&id=2226>, <https://armstat.am/am/?nid=81&id=1994>, վերջին մուտք 24.03.2025

²⁵ ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, https://armstat.am/file/article/lab_market_2023_11.pdf, https://armstat.am/file/article/lab_market_2021_11.pdf, վերջին մուտք 24.03.2025

Թափուր աշխատատեղերի կառուցվածքում մեծ կշիռ ունի պետական կառավարման ոլորտը և արդյունաբերությունը, ընդ որում 2022թ նախորդ տարվա համեմատ թափուր աշխատատեղերի թիվը նվազել է ավելի քան 15 տոկոսով: Հետաքրքիր է, որ նոր ստեղծված աշխատատեղերի թվի աճը մեր դիտարկված ժամանակահատվածում 2 անգամ ավել էր՝ 31.2 տոկոս: Վերջին երեք տարիներին կրճատված աշխատատեղերի թիվն անընդհատ աճել է: Ինչպես տեսնում ենք աղյուսակում բերված տվյալներից 2019-2022թթ աշխատատեղերի թիվը՝ կրճատված աշխատատեղերի թվի հաշվառմամբ, աճել է ընդամենը 18.3 հազարով: Բոլոր տարիներին ստեղծված աշխատատեղերի մեծ թվով աչքի է ընկնում առևտրի ոլորտը, գնահատելի է, որ, բացառությամբ 2022թ, պետական կառավարման ոլորտում դրանց թիվը մեծ չէ, իսկ արդյունաբերությունում տարեցտարի աճել է:

Արտադրողականությունը երկրների տնտեսական աճի հիմնական աղբյուրն է: Աշխատուժի հետազոտության զեկույցներում առկա պաշտոնական վիճակագրական տվյալների միջոցով հաշվարկել ենք մեկ զբաղված անձին ընկնող իրական ՀՆԱ-ի տարեկան աճի ցուցանիշը, որը բարձր էր 2015թ և 2022թ:



Գծապատկեր 8. Մեկ զբաղված անձին ընկնող իրական ՀՆԱ-ի տարեկան աճի ցուցանիշը, %

Ներուժային տնտեսական աճի և ներդրումային ակտիվության դանդաղեցման ֆոնին արդիական է դառնում կառուցվածքային քաղաքականությունը, որի միջոցառումները պետք է միտված լինեն կայուն տնտեսական աճի ձեռքբերմանը, ազգային տնտեսության խոցելիության նվազմանը, մակրոտնտեսական անհավասարակշռությունների կանխմանը: Մակրոտնտեսական հաջող կոորդինացման հիմնական գործոններից է նաև գործընկեր պետությունների հետ ինստիտուցիոնալ կոնվերգենցիան, կառուցվածքային բարեփոխումների փոխհամալրումը: Այս առումով հիմնական խնդիրները հանգում են հետևյալին.

-տնտեսության տարբեր հատվածներում երկրի պահանջներին համապատասխանող կառուցվածքային բարեփոխումների վերլուծությունը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների փոխլրացմամբ.

-մարտահրավերների բացահայտումն ու հաղթահարումն, տնտեսական աճը սահմանափակող գործոնների դեմ պայքարը, կառուցվածքային խոցելիության մեղմացումը:

Տնտեսության կառուցվածքից և պետական պարտքի մակարդակից է գլխավորապես կախված կառուցվածքային հաշվեկշռի նպատակային ցուցանիշը: Միջ-ազգային փորձը վկայում է, որ կառուցվածքային բյուջետային դեֆիցիտից ապահովագրման միջոցներից մեկը բյուջետային կանոնների

հաստատումն է՝ կոչված նվազեցնելու պետական ֆինանսների կախվածության կառուցվածքային և ցիկլային տատանումներից: Հատկանշական է, որ հումքային ուղղվածությամբ երկրներում բյուջետային կանոնները պայմանավորվում են հիմնական հումքային ապրանքի բազային գնով: ԵԱՏՄ անդամ երկրների համար կառուցվածքային բյուջեի դեֆիցիտը չի ընկալվում որպես նպատակային կողմնորոշիչ, այլ գերատեսչությունների կողմից օգտագործվում է որպես վերլուծական ինդիկատոր, իսկ ԵՄ կառուցվածքային բյուջետային դեֆիցիտի նպատակային մակարդակին չհասած անդամ պետությունների հիմնական կանոնը բյուջեի ծախսերի աճի սահմանափակումն է ՀՆԱ-ի աճի տեմպերով: Կենտրոնական բանկերը ԵԱՏՄ որոշ անդամ երկրներում վերլուծական նպատակով հաշվարկում են համախմբված բյուջեի կառուցվածքային դեֆիցիտի և թողարկման միջև խզվածքը, սակայն օրենսդրորեն միայն Ռուսաստանում, Հայաստանում և Ղազախստանում կան բյուջեի եկամուտներն ու ծախսերը կարգավորող բյուջետային կանոններ:

Եզրակացություն: Տնտեսության կայուն և արդյունավետ զարգացման հիմնական նախապայմաններից մեկը ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավումն է: Հետևապես ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավումը էական պայման է ոչ միայն տնտեսական համակարգի արդիականացման ու ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման, այլև պետական բյուջեի ծախսերի ու եկամուտների օպտիմալ համամասնությունն ձևավորելու համար: ՀՆԱ-ի կառուցվածքի ազդեցությունը չափազանց մեծ է նաև երկրի տնտեսական աճի որակի վրա: Ուստի, դրա փոփոխության և տնտեսական աճի որակի բարձրացման ուղղությամբ քայլերը պետք է միտվեն ոչ միայն տնտեսության ներուժի զարգացմանը, այլև ծախսերի կառուցվածքի բարելավմանը: Բյուջետային կանոնների մեջ կառուցվածքային հաշվեկշռի ներդրման համար անհրաժեշտ ենք համարում.

- վերլուծել կառուցվածքային բյուջետային հաշվեկշռների օգտագործման և հաշվարկման փորձը,

- ձևավորել անհրաժեշտ տեխնիկական ու ինստիտուցիոնալ հիմքեր, ներառյալ կանոնների ընտրությունը և մշակումը,

- պետական կառավարման հատվածի համար մշակել համախմբված բյուջեի կառուցվածքային դեֆիցիտի հաշվարկման մեթոդական մոտեցում, գնահատել ՀՆԱ-ի թողարկման խզվածքը, դրա էլաստիկության բյուջետային պարամետրերը,

- սահմանել ՀՆԱ-ի նկատմամբ կառուցվածքային բյուջեի դեֆիցիտի նպատակային մակարդակի արժեքը, քայլեր ձեռնարկել դրա ներդրման ուղղությամբ:

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ պետական ծախսերի հավելաճի տեմպի և տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափը նկարագրող ցուցանիշների միջև օրինաչափությունը չի պահպանվել: ՀՀ-ում պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է, բավական հեռու է համաշխարհային միջինից, ուստի այն նվազ չափով է նպաստում տնտեսական աճին: Կարելի է նաև պնդել, որ պետական ծախսերի կառուցվածքը և ուղղությունները անարդյունավետ են: Պատճառը, թերևս, պետական ծախսերի

կառուցվածքում մուլտիպլիկատիվ մեծ էֆեկտ ունեցող ծախսերի փոքր տեսակարար կշռն է: Բացի դրանից, այդ ծախսերի իրականացումն ուղեկցվում է որոշակի կոռուպցիոն ռիսկերով՝ պայմանավորված նաև տնտեսության կառուցվածքով և ներմուծման մեծ մասնաբաժնով: Ի վերջո պետական ծախսերի ցանկացած ուղղություն այս կամ այն ձևով ֆինանսավորում է ներմուծումը: Տնտեսական միջավայրի փոփոխություններն ազդել են ժողովրդագրական իրավիճակի վրա. 2017թ մինչև 2022թ Հայաստանի բնակչությունը աճել է 0.5%-ով, իսկ տնտեսապես ակտիվ աշխատանքային ռեսուրսները՝ 1.5%-ով: Աշխատուժի աճի համեմատաբար բարձր տեմպերի հետևանքով 0.8%-ային կետով աճել է բնակչության կազմում աշխատուժի մասնաբաժինը, իսկ ոչ ֆորմալ զբաղվածությունը ընդհանուր զբաղվածության մեջ 2018թ սկսած նվազել է:

ՀՀ տնտեսական զարգացումը վերջին տարիներին ընթանում է առանց արդյունաբերության և գյուղատնտեսության «էական դերակատարության», ի հակառակ դրան աճել են տնտեսական աճին ծառայությունների, առևտրի ոլորտների նպաստումները: Որպես հետևանք տնտեսության նյութական բարիք ստեղծող երկու խոշոր ճյուղերի մասնաբաժինների կրճատումը և ծառայությունների ոլորտի մասնաբաժնի ավելացումը ՀՆԱ-ում, հաճախ գույքորոշվում է ձգնաժամերի հանդեպ մեր երկրի դիմադրողականության անկմամբ: ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառությունը տեսանելի են, ինչը չի կարելի ասել հարկաբյուջետային քաղաքականության առումով: Մասնավորապես կարելի է հարկային օրենսդրության փոփոխության միջոցով ծառայությունների, առևտրի և ֆինանսական ոլորտների հարկային բեռն ավելացնել՝ կիրառելով ավելի արդյունավետ հարկային վարչարարություն, վերանայելով հարկման շեմերն ու արտոնությունները, ներդնելով պրոգրեսիվ հարկման մեթոդներ: Կատարված վերլուծության արդյունքում առանձնացրել ենք բյուջետային ծախսերի պլանավորման ու իրականացման արդյունավետության մի շարք խնդիրներ.

- մակրոարդյունավետություն. առանձին ծրագրերի ֆինանսավորմանը պետք է հատկացվի ՀՆԱ-ի այնպիսի չափ, որը կբացառի գնային ցնցումներն ու շուկայական անհավասարակշռության առաջացման հնարավորությունը,

- միկրոարդյունավետություն. պետական ծախսերն հարկ է արդյունավետորեն բաշխել բյուջետային ֆինանսավորում ստացող ոլորտների միջև՝ նպաստելով գործարար հատվածի զարգացմանը,

- շահադրդում. զբաղվածության, խնայողությունների և ներդրումների վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ընտրել սոցիալական ինստիտուտների ռացիոնալ կառուցվածք, ֆինանսավորման գործող մեխանիզմներ և տրանսֆերտների ձևերն համակարգ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бокарева Л., 2008, Аудит эффективности: вопросы методологии и методики // Учет и контроль, М., № 2; Осипов А., Аникин В., Котлячков О. и др., Методика оценки

- эффективности использования государственных средств: монография, Ижевск: Изд-во ИЖГТУ, 2006.
2. Жуков В., Опеньшев С. 2000г. Предмет, метод, виды и принципы государственного финансового контроля. Бюллетень Счетной палаты РФ. N 4.
 3. Кунас З. 1994г. Среднесрочное финансовое планирование в Германии. Финансы. N 10.стр. 47
 4. Радыгин А., Энтов Р., 2008, В поисках институциональных характеристик экономического роста(новые подходы на рубеже XX-XI вв). Вопросы экономики, № 8.
 5. Bom, Pedro R.D., & Jenny E. Ligthart. 2014. “What Have We Learned From Three Decades Of Research On the Productivity of Public Capital?” Journal of Economic Surveys Wiley Blackwell, vol. 28(5): 889–916 (December).
 6. Eden, Maya, & Aart Kraay. 2014. “‘Crowding in’ and the returns to government investment in low-income countries,” Policy Research Working Paper Series 6781, The World Bank, Washington, DC.
 7. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք <https://armstat.am>
 8. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք <https://minfin.am>
 9. Portland State University, Beyond GDP: The Need for New Measures of Progress, https://pdxscholar.library.pdx.edu/cgi/viewcontent.cgi?article=1010&context=iss_pub
 10. World Bank Group. <http://go.worldbank.org/E5PB0575Z0>

ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ

Համառոտագիր

Հայաստանի տնտեսության կառուցվածքը բարելավելու և դիվերսիֆիկացնելու խնդիրները կարևոր են միջազգային հարթակներում սեփական դիրքն ամրապնդելու և բյուջեի ծախսերի միջոցով տնտեսության ներուժն առավելագույնս օգտագործելու առումով: ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավումը եական պայման է ոչ միայն տնտեսական համակարգի արդիականացման ու ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման, այլև պետական բյուջեի ծախսերի ու եկամուտների օպտիմալ համամասնություն, պետական ծախսերի արդյունավետ կառուցվածք ձևավորելու համար: Սրանով էլ հիմնավորվում է հոդվածի **թեմայի արդիականությունը**: Հետազոտության **նպատակն** է իրականացնել ՀՀ տնտեսական աճի, դրա վրա տնտեսության ճյուղերի ազդեցության շարժընթացի վերլուծություն, բացահայտել բյուջետային ծախսերի կառուցվածքային տեղաշարժերը վերջին տարիներին և հիմնավորել տնտեսական ներուժի զարգացման վրա դրանց հավանական ազդեցությունները:

Մեթոդաբանություն: Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների գնահատման համար օգտագործվել է Համաշխարհային բանկի կողմից մշակված

գործիքը՝ «Job Generation and Growth Decomposition tool» անվամբ: Մեր հիշատակած այս մեթոդաբանությունը հիմնվում է մեկ շնչի հաշվով օգտակար գործողության արդյունքի տարրալուծման վրա(Շափլի/Shapley), ցուցանիշ, որը բնութագրում է տնտեսական աճի դինամիկան ՀՆԱ-ի հետ մեկտեղ: Այս ցուցանիշի աճի հիմնական աղբյուրը աշխատանքի արտադրողականությունն(1 աշխատողի հաշվով թողարկված արտադրանքը) է, նոր աշխատատեղերի ստեղծումը (գրադվածության մակարդակը) և ժողովրդագրական գործոնը(գրադվածների մասնաբաժինը բնակչության թվում):

Ստացված հիմնական արդյունքները: Կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ պետական ծախսերի հավելաճի տեմպը և տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափը նկարագրող ցուցանիշների միջև օրինաչափությունը չի պահպանվել: ՀՀ-ում պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է, բավական հեռու է համաշխարհային միջինից, ուստի այն նվազ չափով է նպաստում տնտեսական աճին: Կարելի է նաև պնդել, որ պետական ծախսերի կառուցվածքը և ուղղությունները անարդյունավետ են: Պատճառը, թերևս, պետական ծախսերի կառուցվածքում մուլտիպլիկատիվ էֆեկտ ունեցող ծախսերի փոքր տեսակարար կշռն է: Տնտեսական միջավայրի փոփոխություններն ազդել են ժողովրդագրական իրավիճակի վրա. 2017թ մինչև 2022թ ՀՀ բնակչությունը աճել է 0.5%-ով, իսկ տնտեսապես ակտիվ աշխատանքային ռեսուրսները՝ 1.5%-ով:

ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառությունը ի տարբերություն հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունի են: Հարկային օրենսդրության փոփոխության միջոցով կարելի է ծառայությունների, առևտրի և ֆինանսական ոլորտների(«գերտաքացած») հարկային բեռն ավելացնել՝ կիրառելով ավելի արդյունավետ հարկային վարչարարություն, վերանայելով հարկման շեմերն ու արտոնությունները:

Բանալի բառեր. Տնտեսության ներուժ, պետական ծախսերի կառուցվածք, աշխատանքի արտադրողականություն, տնտեսության արտահանելի հատված

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ГОСУДАРСТВЕННЫМИ РАСХОДАМИ И РОСТОМ ЭКОНОМИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА РА

МАНУШ МИНАСЯН

Аннотация

Вопросы улучшения и диверсификации структуры экономики Армении важны с точки зрения укрепления собственных позиций на международных площадках и максимального использования потенциала экономики за счет бюджетных расходов. Считаем, что улучшение структуры ВВП является необходимым условием не только модернизации экономической системы и создания благоприятной инвестиционной среды, но и оптимального соотношения расходов и доходов государственного бюджета, государственных расходов. Это оправдывает **актуальность темы статьи.**

Целью исследования является анализ динамики экономического роста в Республике Армения, влияния секторов экономики, выявление структурных сдвигов в расходах бюджета за последние годы и обоснование их вероятного влияния на развитие экономического потенциала.

Методология. для оценки структурных изменений в экономике использовался разработанный Всемирным банком инструмент под названием «Job Generation and Growth Decomposition tool». Эта упомянутая нами методология основана на декомпозиции результата полезной деятельности на душу населения (Шепли) – показателя, характеризующего динамику экономического роста наряду с ВВП. Основным источником роста этого показателя является производительность труда (выработка на одного работника), создание новых рабочих мест (уровень занятости) и экономический фактор (доля занятого населения).

Основные результаты. Исследование показало, что закономерность между темпами роста государственных расходов и показателями, характеризующими вклад государственных расходов в экономический рост, не сохранилась. В РА доля государственных расходов в ВВП все еще невелика и далека от среднего мирового показателя, поэтому они в меньшей степени способствуют экономическому росту. Можно также утверждать, что структура и направления государственных расходов неэффективны. Причина, возможно, в небольшом весе расходов с большим мультипликативным эффектом в структуре государственных расходов. Изменения экономической ситуации повлияли на демографическую ситуацию. С 2017 по 2022 год население Армении увеличилось на 0,5%, а экономически активные трудовые ресурсы – на 1,5%. В результате относительно высоких темпов роста рабочей силы доля рабочей силы в населении увеличилась на 0,8% пункта, а неформальная занятость в общей занятости снизилась с 2018 года. В РА видно использование инструментов денежно-кредитной политики, чего нельзя сказать с точки зрения фискальной политики. В частности, увеличить налоговое бремя сферы услуг, торговли и финансового сектора («перегретого») можно за счет изменения налогового законодательства, применения более эффективного налогового администрирования, пересмотра налоговых порогов и льгот.

Ключевые слова. Потенциал экономики, структура государственных расходов, производительность труда, экспортный сектор экономики

THE INTERRELATIONS BETWEEN PUBLIC EXPENDITURES AND ECONOMIC CAPACITY ENHANCEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

MANUSH MINASYAN

Abstract

The issues of improvement and diversification of the structure of the Armenian economy are important in terms of strengthening the country's position on international platforms and maximizing the potential of the economy through budget expenditures. We believe that the improvement of the structure of the GDP is an essential condition not only for the modernization of the economic system and the creation of a favorable investment environment, but also for the optimal ratio of state budget expenditures and revenues, state expenditures, to form an effective structure of love. This justifies **the relevance of the research topic.**

The aim of the research is to analyze the dynamics of economic growth in the Republic of Armenia, the impact of economic sectors on it, to reveal structural shifts in budget expenditures in recent years and to substantiate their likely impact on the development of economic potential.

Methodology: The tool developed by the World Bank called "Job Generation and Growth Decomposition tool" was used to assess structural changes in the economy. This methodology is based on the decomposition of the result of useful activity per capita (Shapley), an indicator that characterizes the dynamics of economic growth together with GDP, the main source of growth of this indicator is labor productivity (output per employee), creation of new jobs (employment level) and the economic factor (share of the employed in the population).

The main research findings: The study showed that the regularity between the growth rate of public expenditure and the indicators describing the contribution of public expenditure to economic growth has not been preserved. In RA, the share of public spending in GDP is still small, far from the national average, so its contribution to economic growth is lower. It can also be argued that the structure and direction of government spending is inefficient.

The reason may be the low theoretical weight of expenditures with a large multiplier effect in the structure of government expenditures. Changes in the economic environment have affected the demographic situation. From 2017 to 2022, the population of Armenia increased by 0.5% and the economically active labor force by 1.5%. As a result of relatively high growth rates of the labor force, the share of the labor force in the population increased by 0.8%, and the share of informal employment in total employment decreased since 2018. In RA, the use of monetary policy tools is visible, which cannot be said in terms of fiscal policy. In particular, it is possible to increase the tax burden on services, trade and financial sectors ("overheated") by amending the tax legislation, applying more effective tax administration, revising tax thresholds and privileges.

Keywords: Economic potential, structure of public expenditures, labor productivity, export-oriented sector of the economy.